WIGMORE
WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart

# Ընթացիկ Էպիկրիզ

Նորածինը՝ Դավիթ [redacted] ծնվել է [redacted]26 թ. 2-րդ հղիությունից 2-րդ ծննդաբերությունից պլանային կեսարյան հատման ճանապարհով, 38 շաբաթական գեստացիայից, 3500,0գ քաշով: Հիպերբիլիռուբինեմիայով պայմանավորված ստացել է ֆոտոթերապիա,ունեցել է կերակրման հետ կապված դժվարություններ, փսխումներ, ինչի կապակցությամբ դիմել են Ուիգմոր հիվանդանոց: Ընդունվելիս վիճակը գնահատվել է միջին ծանրության, պայմանավորված փսխումներով: Կատարվել են կերակրման ծավալների և ռեժիմի շտկումներ, որից հետո փսխումներ չեն դիտվել: Հիպերբիլիռուբինեմիայով պայմանավորված,ստացել է ֆոտոթերապիա: Դինամիկայում նորածինը դարձել է ընկճված, թույլ է ծծում, դանդաղ, կերակրման ընթացքում և խորը քնի ժամանակ ունենում է ոչ տիպիկ ձայնային էպիզոդներ, որոնք ուղեկցվում են հաճախացած, ներքաշումներով շնչառության, ունենում է դեսատուրացիաներ, ինչի կապակցությամբ շնչառությունը օժանդակվել է O2 դիմակով: Կատարվել է կրծքավանդակի Ռ-գրաֆիա՝ N: Նեյրոսոնոգրաֆիա՝ Կիսագնդերի պարենխիմայի պատկերը չի համապատասխանում գեստացիոն տարիքին: Ծուրցփորոքային հիպերէխոգենություն, լենտրիկուլոստրիար վասկուլոպաթիա՝ կալցիֆիկատներ? բրտամարմնի հիպոպլազիա: Որովայնի ՈՒՁՀ՝ լյարդի հյուսվածքը պահպանված է, աջ բլթում առկա են բազմաթիվ կալցիֆիկատներ 1,5 – 2,0 մմ: Հաշվի առնելով կալցիֆիկատների առկայությունը կատարվել են լրացուցիչ լաբ. հետազոտություններ՝ CMV PCR որոշում՝ բացասական, TORCH PCR որոշում՝ բացասական: Զննվել է նյարդաբանի կողմից: 27/06-ին կատարվել է ԷԷԳ հետազոտություն՝ N: 09/06-ին կատարվել է գլխուղեղի և պարանոցի ՄՌՏ հետազոտություն 3 տեսլա:Եզրակացություն՝ ՄՌ պատկերը բնորոշ է բրտամարմնի դիսգենեզիային, գլխուղեղի սպիտակ նյութի ենթակեղևային և հարփորոքային հատվածներում առկա օջախներին, հավանաբար դիսմետաբոլիկ փոփոխությունների արդյունքում (բիլիռուբինի դեպոզիցիայի տեղամասեր): Պարանոցի փափուկ հյուսվածքների ՄՌ պատկերը բնորոշ է կերակրափողի դիլատացիայի (անհրաժեշտ է ժխտել դիստալ հատվածների ստենոզը և ախալազիան), պարանոցային լիմֆադենոպաթիային:14/07-ին կատարվել է բջջագենետիկական հետազոտություն GTG կարիոտիպավորում:

Երեխայի ախտորոշման ճշտման նպատակով ցուցված է ամբողջական գենոմի սեքվենավորում (WGS): Գենետիկայի փորձագիտական կենտրոնում, արժեքը՝ 680,000 (վեց հարյուր ութսուն հազար դրամ):

Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոցի Նորածնային Ծառայության պատասխանատու՝ Սերժիկ Մելիքսեթյան
15/07/26թ

WIGMORE GROUP
УИГМОР ГРУП
00219271